ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23-24/25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Huamu	Huamu	Icar visual tag 78x56, 60x56	Yangzhou Huamu Technology Co., LTD	1. Ականջապիտակին ներկայացվող պահանջները. 1) մեկ զույգ՝ մեկ հատ՝ ականջապիտակի «իգական» կցամասի երկարությունը՝ 78 մմ, լայնությունը՝ 56 մմ, իսկ «արական» կցամասի երկարությունը՝ 60 մմ, լայնությունը՝ 56 մմ, 2) «իգական» կցամասը մակնշված կլինի 3 տողով՝ վերևից 1-ին տողի բարձրությունն առնվազն 8 մմ, 2-րդ տողի բարձրությունը՝ (QR կոդ) առնվազն 15 մմ, 3-րդ տողի բարձրությունն՝ առնվազն 15 մմ և յուրաքանչյուր թվի (տառի) լայնությունը՝ առնվազն 8 մմ, միջթվային հեռավորությունն՝

						առնվազն 2 մմ, 3) յուրաքանչյուր «իգական» կցամասի 2-րդ տողում՝ արագ արձագանքման (QR) կոդ, 4) յուրաքանչյուր ականջապիտակի QR կոդը պետք է իր մեջ պարունակի՝ https://anipas.am/t/xxxxxxxxx հղումը, որտեղ xxxxxxxxx այդ ականջապիտակի նույնականացման համարն է, 5) «արական» կցամասը մակնշված կլինի 3 տողով՝ վերևից 1-ինի բարձրությունն առնվազն 8 մմ, 2-րդ տողի բարձրությունն՝ առնվազն 10 մմ, 3-րդ տողում պետք է գրված լինի «Republic of Armenia» բառերը, իսկ բարձրությունն՝ առնվազն 5 մմ և յուրաքանչյուր թվի (տառի) լայնությունն՝ առնվազն 8 մմ, միջթվային հեռավորությունն՝ առնվազն 2 մմ, 6) ականջապիտակի գույնը՝ դեղին, 7) ջերմակայունությունը՝ (550 C-ից մինչև +550 C, 8) ականջապիտակները ունենեն առաջնային և երկրորդային փաթեթավորում, համապատասխանաբար մինչև 100 զույգ և մինչև 1000 զույգ քանակներով և ըստ նույնականացման AM XXX XXXXXX-

						ից AM XXX XXXXXX միջակայքում գտնվող չկրկնվող թվեր՝ հերթական համարներ, 9 երկրորդային փաթեթավորման վրա նշված կլինի արտադրող երկրի, կազմակերպության անվանումները, քանակը և համարների միջակայքը, արտադրման ժամկետը, ականջապիտակների կցամասերի չափերը, գույնը, ջերմակայունությունը։ 2. Արտադրանքին ներկայացվող պահանջները. Լազերային եղանակով երկկողմանի տպագրված (մակնշված) մեկանգամյա օգտագործման համար նախատեսված խոշոր եղջերավոր կենդանու ականջապիտակները՝ 1) պատրաստված լկինեն ջերմապլաստիկ պոլիուրեթանային ճկվող, պլաստիկ նյութից 2) կենդանու երկու զույգ աջ և ձախ ականջների ականջապիտակների՝ «իգական» և «արական» կցամասերի վրա նշված կլինի Հայաստանի Հանրապետություն՝ «AM» և միևնույն իննանիշ չկրկնվող նույնականացման անհատական համարը, որի վերջին թիվը

						վերստուգիչ համարն է, 3) ականջապիտակի նուլյնականացման համարները դասավորված կլինեն առավելագույնը 2 շարքով, 4) վերստուգիչ համարը կարող է լինել մինչև 25%-ով ավելի փոքր չափսի, 5) վերստուգիչ համարի գեներացման բանաձևը գնորդը կտրամադրի մատակարարին՝ մրցույթի հաղթող ճանաչվելուց հետո, 6) երկու զույգ աջ և ձախ ականջների ականջապիտակների ինչպես արական, այնպես էլ իգական կցամասերի արտաքին մակերևույթների վրա պահանջվող տվյալները կհամընկնեն, կլինեն չջնջվող՝ առնվազն 2 մմ լայնությունը սև ներկով տպագրված և դյուրընթեռնելի կենդանու ողջ կյանքի ընթացքում: 3. Գրանցմանը և արտադրող կազմակերպությանն առնչվող պահանջները. 1) ականջապիտակների առավել արդյունավետ օգտագործման վերաբերյալ ցուցումներ, 2) արտադրողի կողմից տրված պարտավորագիր, համաձայն որի նա պարտավորվում է այլ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО "Энерджи Груп" в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ԷԱՃԱՊՁԲ-23-24/25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					

հաճախորդի համար նույն չկրկնվող նույնականացման անհատական համարներով ականջապիտակներ չարտադրել: 4. Որակի պահանջները. 1) մատակարարված ապրանքը կհամապատասխանի մրցույթի հայտով ներկայացված տեխնիկական պահանջներին, 2) ականջապիտակները ներառված կլինեն Կենդանիների հաշվառման միջազգային կոմիտեի (ICAR) պաշտոնական կայքում՝ http://www.icar.org/, 3) ականջապիտակի խոտանի առկայության դեպքում, որը կհիմավորվի գնորդի կողմից, մատակարարը հայտը էլ. փոստի միջոցով ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տրամադրել նոր ականջապիտակ՝ խոտանված ականջապիտակի նույնականացման համարով: 5. Ընդհանուր տեղեկատվություն. 1) Ականջապիտակների մեկ հատը դիտարկում է մեկ զույգ, ընդհանուր քանակը՝ 100 000 զույգ, /նմուշը կցվում է/, 2) 4-րդ կետի 3-րդ ենթակետի դեպքում՝

					վերականգնված ականջապիտակները չեն հաշվարկվի պատվիրված ականջապիտակների ընդհանուր թվաքանակի մեջ, 3) 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը գործում է պայմանագրի կատարման փուլում, 4) Մատակարարը պարտավոր է ապրանքը տեղափոխել մատակարարման վայր և բեռնաթափել պահեստում, 5) Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կտրամադրվեն ականջապիտակների հերթական համարները։